59
Ծ-98

ՀԱՅԿ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԾՐԱԳԻՐ
# ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ

1936 Թ.
ԵՐԵՎԱՆ

59
Ծ-98

Ա2 849 -8 NOV 2007

# ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

(III կուրսի համար)

(Կազմել է Հ. ԴՈՂՈՍՅԱՆ. Հաստատված է Ուսուցիչների վերապատրաստման ինստիտուտի բնագիտության-քիմիայի ամբիոնի կողմից):

1. Քորդավոր տիպի ընդհանուր առանձնահատկությունները. քորդա ունենալը իբրև հիմնական հատկանիշը, քորդան տունիկատների և անգանգների մոտ, քորդան մյուս ողնաշարավորների մոտ: Մարմնի բիլատերալ սիմետրիան խողովակավոր նյարդային սիստեմը: Քորդայի և նյարդային խողովակի տեղը ողնաշարի նկատմամբ: Գլխավոր օրգանների մետամեր կազմությունը:

Քորդավորների ենթատիպերը՝ Հեմիքորդատա, ուրոքորդատա (տունիկատա), ակրանիա (անգանգներ), վերտեբրատա (ողնաշարավորներ):

1) Հեմիքորդատա (կիսաքորդավորներ).- Բնորոշ հատկանիշները. Բալանոգլոսս ուռը. կազմությունը ու միջանկյալ ձև. հանդիսանալը, իբրև կապող օղակ որդերի, փշամորթների և ողնաշարավորների:

2) Թրթուրաքորդավորներ (ուրոքորդատա), տունիկատա.— Բնորոշ առանձնահատկությունը: Տունիկատների կազմակերպված ասցիդիայի կազմությունը. Նստակյացությունը, թրթուրային վիճակը: Ասցիդիայի [illegible] սեռերը: Սնդառության և շնչառության օրգանները, տունիկատների դասերը՝ 1) Ապենդիկուլյարիա, 2) Ասցիդիա, 3) Սալպեր: Դրանց ներկայացուցիչները ու կազմությունը:

3. Ենթ. տիպ. Ակրանիա (անգանգներ)- ընդհանուր առանձնահատկությունները — քորդան և խողովակավոր նյարդային սիստեմը: Նշտարիկը իբրև ներկայացուցիչ անգանգների: Արտաքին տեսքը, լանցետաձև մարմինը, քորդան որը հանդիսանում է կմախքը: Նյարդային սիստեմը և նրա դասավորությունը: Մարսողության և արտաթորության օրգանները, արյան շրջանառության օրգանները, սեռական օրգանները, սաղմի զարգացումը: Անգանգների ծագման հարցը:

15.05.2013

4. Ենթ. տիպ Վերտեբրատա (Ողնաշարավոր-ներ) — Բնորոշ առանձնահատկությունները. Ողնաշարավորների մարմնի կառուցվածքը, բազմացման ձևերը, պաշտպանության համար ձեռք առած հարմարանքները:

Ներքին կմախքը և նրա մասերը՝ առանցքային կմախք, գանգ և վերջավորությունների կմախքը: Մկանները — հարթ և ընդլայնաշերտ:

Նյարդային սիստեմը, նրա մասերը, կենտրոնական նյարդային համակարգությունը՝ գանգուղեղ և ողնուղեղ և պերիֆերիկ նյարդային սիստեմ: Գանգուղեղի մասերը և առանձնական կազմությունը: Զգայարանները: Մարսողության, շնչառության, արյան շրջանառության օրգանները: Մարմնական խոռոչ: Արտաթորության օրգաններ և նրանց կազմությունը, սեռական օրգանները և նրանց առնչությունը արտաթորության օրգանների հետ:

Ողնաշարավորների դասերը՝

1. դաս Բոլորաբերաններ (Ցիկլոստոմատա)
2. " Ձկներ (Պիսցես)
3. " Երկկենցաղներ (Ամֆիբիա)
4. " Սողուններ (Ռեպտիլիա)
5. " Թռչուններ (Ավես)
6. " Կաթնասուններ (Մամմալիա)

1. դաս — Բոլորաբերաններ. — Առանձնահատկությունները: Ամենացածր կարգի ողնաշարավորների օրինակ: Իսկական ծնոտների բացակայություն: Բերանի գավաթը հատուկ ծծող ձագարում, որը ողնաձև է: Չունեն զույգ վերջավորություններ, իսկական ատամների բացակայություն:

Մինոգի արտաքին տեսքը, ներքին կառուցվածքը, կմախքը, մկանային սիստեմը, նյարդային սիստեմը զգայարանները, շնչառության և արյան շրջանառության օրգանները: Բոլորաբերանների նշանակությունը:

2. դաս Ձկներ (Պիսցես). — Ընդհանուր առանձնահատկությունները, ջրային կենցաղը և խռիկներով շնչելը: Զույգ լողակներ ունենալը: Վերին և ստորին ծնոտները: Կմախքը, արյան շրջանառության օրգանները:

1. Ենթ. դաս. Կռճիկային ձկներ. — Բնորոշ նշանակները — նրանց կարգերը և կարևոր ներկայացուցիչները: Շնաձուկը իբրև ներկայացուցիչ:

2. Ենթ. դաս... — Ոսկրային ձկներ — դրանց կարգերը՝ խաչաթևավորներ և միաթոքավորներ:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՀ-Арм ССР им. А. М...
1369-2011



3. Ենթ. դաս.— Ոսկրային ձկներ. — Ընդհանուր առանձնահատկությունները. — կարևոր կարգերը:

Perca fluviatilis-ը իբրև օրինակ-արտաքին տեսքը ու կառուցվածքը: Կմախքային և մաշկային ծածկույթը, ողնաշարը: Ոսկրային ձկների գանգատուփը և նրա առաջին ծնոտները: Նյարդային սիստեմը, զգայարանները: Արյան շրջանառության օրգանները: Ձկների մաշկը, թեփուկների տեսակները՝ գանոիդ և պլակոիդ թեփուկներ: Ձկների բնորոշ կենսական առանձնահատկությունները:

3-րդ դաս — Երկկենցաղներ (Ամֆիբիա) — Ընդհանուրը — Մարմնի արտաքին տեսքը, մաշկը, ողնաշարը, գանգի կմախքը և վերջավորությունների կմախքը, նյարդային սիստեմը, զգայարանները, շնչառության և արյան շրջանառության օրգանները, բազմացման օրգաններ — զարգացումը:

Դասակարգումը՝

I. Ենթ. դաս. Ստեգոցեֆալիա (զրահագլուխներ) — Նրանց մեջ են մտնում մեռյալ ձևերը:

II. Ենթ. դաս. Անզրահներ (Լիսսամֆիբիա). —

1-ին կարգ. Անոտաներ (Ապոդա)
2-րդ կարգ. Պոչավոր երկկենցաղներ
3-րդ կարգ. Անպոչներ

Իբրև պոչավորների ներկայացուցիչներ տրիտոնն ու սալամանդրը: Իբրև անպոչների ներկայացուցիչ գորտը:

Անամնիաներ և ամնիոտաներ — Ամնիոն չունեցողներ և ամնիոն ունեցողներ: Անամնիաներ են ձկներ, երկկենցաղները, իսկ ամնիոտաներ են սողունները, թռչունները և կաթնասունները: Ամնիոտաների սաղմնային զարգացումը — սաղմնային հավելյալ օրգանները:

4-րդ դաս — Սողուններ (Ռեպտիլիա) Ընդհանուր առանձնահատկությունները: Մարմնի ձևը և յուրահատուկ շարժումը: Մաշկը և թեփուկները, կմախքը, մկանները: Նյարդային սիստեմը, արյան շրջանառության սիստեմը: Միզասեռային օրգանները: Սողունների կլասիֆիկացիան՝

1. Ենթ. դաս Նախամողեսներ (ռինխոցեֆալիա)
2. " " Թեփուկավորներ
3. " " Կոկորդիլոսներ
4. " " Կրիաներ

Թեփուկավորների կարգերը՝

1-ին կարգ Մողեսներ — ընդհանուր առանձնա-

առանձնահատկությունները, մարմնի ձևը և ներքին կառուցվածքը:

1. Ենթ. կարգ Գեկկոններ
2. Ենթ. կարգ իսկական մողեսներ
2. կարգ. Քամելեոններ
3. կարգ. Օձեր

Սրանց ընդհանուր առանձնահատկությունները:

3-րդ ենթ. դաս Կոկորդիլոսներ.— ընդհանուր առանձնահատկությունները, մարմնի ձևը, կենցաղը:

4-րդ ենթ. դաս Կրիաներ.— ընդհանուր առանձնահատկությունները, կենցաղը, բնագավառը:

5-րդ դաս Թռչուններ (Aves)— Թռչունների առաջացումը սողուններից: Բնորոշ հատկանիշները: Մաշկը, փետուրները, կմախքը և դրա առանձնահատկությունները, մկանները: Մարսողության օրգանները, արյան շրջանառության օրգանները, նյարդային համակարգը: Բիոլոգիական առանձնահատկությունները: Թռչունների կլասիֆիկացիան, թռչունների ծագումը:

III Ենթադասի՝ կառուցվածքների բնորոշ նշանակությունները և մի քանի բնութագրեր ու դրանց կարևոր ներկայացուցիչները: Աշխարհի բոլոր թռչունների ներկայացուցիչ:

Թռչունների սիստեմատիկա

Ենթադաս— Ornithurae

I Ենթակարգ. Ջայլամներ. 1. կարգ — աֆրիկյան ջայլամներ, 2 կարգ — ամերիկյան ջայլամներ (նանդու), 3 կարգ — ավստրալիական ջայլամներ (կազուար, էմու) 4 կարգ — կիվի, կամ [illegible]:

II Ենթակարգ. Պինգվիններ

III Ենթակարգ. Կատարավորներ (Carinatae) կարգեր. Գագաթներ, մրջնակեր, թիաթևավորներ, արագիլներ, սագեր (սագ, բադ, կարապ), ցերեկային գիշատիչներ, բուեր, հավեր, կռունկներ, աղավնիներ, կկուներ, թութակներ, փայտփորիկներ, ճնճղուկներ:

6-րդ դաս — Կաթնասուններ (Mammalia)— ընդհանուր առանձնահատկությունները: Մաշկի կառուցվածքը, մաշկային ծածկույթը, մաշկի գեղձերը, ճարպի և քրտինքի գեղձերը: Քրտինքի գեղձերի ձևափոխությունը կաթնագեղձերի. Կաթնագեղձերի կերը և խնամքի պտուկները: Կմախքը՝ գանգ, կրծքավանդակ և ատամների կառուցվածքը՝ նյարդային սիստեմը ու ատամ



Ծննդական կառուցվածքը (զանգվածը):

Մարսողական օրգանը, ճողովը ու ատամները և դրանց տեսակները: Շնչառության օրգանները, արյան շրջանառության օրգանները: Միզասեռական սիստեմը: Սեռական օրգանները: Կաթնասունների կլասիֆիկացիան:

1-ին ենթ. դաս. Միանցքավորներ (Պրոտոտերիա) ներկայացուցիչ՝ էխիդնա, բադակտուց:

2-րդ ենթ. դաս. Պարկավորներ (Մետատերիա)— կենգուրու:

3-րդ ենթ. դաս. Պլացենտավորներ (Պլացենտալիա):

Պլացենտավորների կարգերը՝ 1) Միջատակերներ (ոզնի, խլուրդ) 2) Չղջիկներ (չղջիկավոր), 3) Գիշատիչներ (կատու, շուն) 4) Կետազգիներ (կետայիս), 5) Կրծողներ (կրծողներ), 6) սմբակավորներ, 7) կճղակավորներ (պրոբոսցիդներ), 8) Կապիկներ (մարդակերպ կամ պրիմատներ)

Այս կարգերի ու կարևոր ներկայացուցիչների ընդհանուր առանձնահատկությունները: Սրանցից տնտեսական նշանակություն ունեցողները: Ընտանի կենդանիների ծագումը: Մարդակերպ կապիկներ, մարդու ծագումը:

Դասագիրք— Матвеев— Курс зоологии

<< Ազգային գրադարա
NL0359794

14522

59
8-98